



ՀԱՆԳԻՍ ԱԶԳԱՅԻՆ

Մամլոյ իւրարանչիւր շրջանը 32 օրինակ է :
Ստորագրութեան տեղն է Կ. Պոլիս, Մեծ Նոր խան վերի յարկ Թիւ 6 :
Իւրս երթալիք փոստային ծախքը աւանդին վրայ է :

Երջանին գինը կէս Օսմ. սոկի 50
Մէկ Թիւր դոնեկան արծաթ 1
Անվճար նամակ չընդունուիր : — Ծանուցման տողը 5

Թիւ 806 ԴԻ ՏԱՐԻ ԵՐԶԱՆ ԺԶ.

1884

ՉՈՐԵՔԱՐԹԻ 13 ՄԱՅԻՍ

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՑ

Եկեղեցական հանդէս. — Ընտրութիւնք. — Թօրգարույի Լուսինեան Ընկ. — Ժամանակագրականք. — Հանելուկ. — Զուարճալիք. — Ստուգաբանական. — Միտնատ բաշայի ձերբակալութիւնը. — Ապտիւլ Ազիզի սպանման պարագայները. — Նամակ Տիգրանեան Մ. Եպիսկոպոսի. — Ազգը Լիւանդանոցի Հողարարութեան. — Հրէշային երեւոյթ մը :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ

Այս կիրակէ օր Մայր եկեղեցին Ամեն Ս. Պատրիարք Հայրը, ի յիշատակ Գարայ դասուն անդամոց եւ ընտանեացը հին եւ նոր ննջեցելոցն հողւոյն, Ս. Պատարագ մատուցանելով վերաբերմամբ եկեղեցական հանդէս մը կատարեց, որոյ փառաւորութեանը վրայ՝ մայրաքաղաքիս ամեն թաղերէն հոն գիւմուղ երեք հազարէն աւելի ժողովրդեան բազմութիւն մը հիացմամբ լցուած միխթարուեցաւ :

Ստուգիւ սոյն հրաշայի հանդէսը, որոյ նմանը չէր տեսնուած, այնպիսի վսեմ եւ փառաւոր արարողութիւն մը էր, որ ջերմտանդ բոլոր ժողովրդեան վրայ՝ անջնջելի տրպաւորութիւն մը ըրաւ :

Պէտք է գիտնալ որ վերաբերմամբ Պատարագի ընթերցումըն ու երգեցողութիւնքը՝ սովորական սրբասացութեան երգերն չըլլալով, Աերաբերումի յատուկ ընթերցումներն ու սագմոսերգութիւններն կ'կատարուին, զբաւիչ եւ զմայլելի եղանակաւ եւ արտաքոյ կարգի փառաւոր արարողութեամբ, ինչպէս են Աերաբերումի միջոցին Ս. Պատրիարքին, իւր քանանայապետական ղգեստներն հանելով, պարզ քանանայական սաղաւարտ մը գլուխը դնելն եւ այնպէս սեղանին աջակողմը ամտոի մը վրայ բազմելը, սկիւր աջակողմեան խորանէն առնուելով կիսազգեստեալ եպիսկոպոսի մը ձևօքը, որոյ երկու կողմէն ալ երկու քանանայներ ընկերացած, նոյնպէս ղգեստաւորեալ, սկիւր բարձող եպիսկոպոսին երկու թեւերուն նեցուկ ըլլալով, թափօրի կարգաւ տարուիլը եւ եկեղեցւոյ առեանը յատկապէս կանոնուած հիւսիւսային, արեւմտեան եւ հարաւային աստիճաններուն վրայ դուրսէն ետքը, սքանչելի եղանակաւ ծանր ստեղծներու երգեցողութիւնը, եւ յետոյ Ս. Սկիւր սեղանին վրայ հանուելով, արտաքոյ կարգի արարողութեամբ մը՝ պատարագամատոյց Սրբազան հօր յանձնուելը :

Այս Սրբազան արարողութիւնը որ երեք քառօրէն աւելի տեսց, խիստ փառաւոր կերպիւ կատարուեցաւ,

ներկայ բոլոր ժողովրդեան սիրտը բարեպաշտ եւ երկիւղած զգացմամբ մը լեցնելով :

Այս վսեմ արարողութեան մեծ փայլ մը տուաւ Մայր եկեղեցւոյ Գարայ դասը, ժամերգութեան սկիզբէն մինչեւ վերջը իւր զմայլելի եղանակօք եւ կանոնաւոր ընթերցումներովն ու երգեցողութեամբը, որք բոլոր ժողովրդեան ուշադրութիւնը կ'զբաւէին, այնպէս որ ժողովրդեան ամենընալ առանց բացառութեան, սկիզբէն մինչեւ վերջը հոն կենալով, սոյն չքնաղ հանդիսին ուկնդիր կ'լինէին հիացմամբ :

Այս առթիւ շնորհակալութեան արժանի են Մայր եկեղեցւոյ Գարայ դասու բոլոր անդամներն, որք անձնանուիրաբար ազգին մէջ եկեղեցական դպրութիւնը զարգացնելով եւ յառաջ տանելու ջանողիւր դասուելով, ազգին ալ փառքն ու պատիւը աւելցնելու կ'նպաստեն յարածամ, մասնաւորապէս յիշատակութեան արժանի են նաեւ երաժշտապետ Պ. Նիկողոս Թաշճեան եւ Պ. Ազարիկ Գարայեան որ ամեն ջանք եւ զոհողութիւն չ'են ինայեք, 130 տարուան դպրական հաստատութիւն մը շարունակելով, Հայաստանեայց եկեղեցւոյ պայծառութիւնն եւ աննման եղանակաց նախնաւանդ՝ հնութիւնը անեղծ եւ անխախտ պահելու :

Ժամանակաւ մեր մէջ դպրութեան յարգը լաւ ծանչցող անձինք շատ կ'գտնուէին, մինչեւ իսկ շատ մ'երեւելի ազգայինք՝ դպրներն միշտ պատուելով ու մեծարելով, բարոյ յայէս թէ նրթապէս կ'քաջալերէին : Հիմայ է որ այս ջերմտանդական զգացումը նուազած է մեր ազգին մէջ դժբաղդաբար : Յոյք, որ մենէ շատ յառաջադէմ սպգ մ'են, դպրութեան յարգը այնքան լաւ կ'ծանչեն ու կ'գնահատեն, որ ամենէն աղքատիկ եկեղեցիներնին անգամ ամիսը 1000-1500 դր. դպրաց համար ծախք մը յատկացուցած են :

Շնորհակալութեմբ մանաւանդ Ամեն Ս. Պատրիարքին, որ ծանչելով ու գիտնալով դպրութեան յարգն ու սրժեքը, իւր անձնական ակարութեամբ ջնայելով իսկ, բարեհաճեցաւ Գարայ դասուն այս խնդիրն ընդունիլ եւ նմանը չտեսնուած փառաւոր արարողութեամբ սոյն Պատարագը մատուցանել, Գարայ դասուն կողմանէ առ ինքն եղած Յիշատիքի նուէրով անգամ առանց ընդունել ուղերու իրենց վերադարձնելով, որ Գարայ դասուն վրայ իր ունեցած բարձր հաբմարմանն անխառնի ապացոյցը կրնայ համարուիլ :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Մայրաքաղաքիս այլ և այլ թաղերուն մէջ այս կիւրակէ օր կատարուած երեսփոխանական քուէարկութիւններէն հետեւեալ արդիւնքներն յառաջ եկան :

Գումգարուի միացեալ թաղէն երեսփոխան ընտրուեցան

- Մեծ. Տեարք Թովմաս Եսայեան 142 քուէիւ
- Սերովբէ Աղնաւոր 129 »
- Թորոս Սարաճեան 128 »
- Տօքթօր Թիրեաքեան 117 »
- Տիգրան Հիւնքեարպէյէնտի 90 »
- Յարութիւն պէյ Տատեան 81 »
- Կարապետ Փանոսեան 72 »

Խասգիւղի թաղէն

- Մեծ. Տեարք Խուբէն Պուլկուրեան 52 »
- Ռէթէոս Թաթէոսեան 45 »
- Սերովբէ Աղնաւոր 41 »

Եէնիգարուի թաղէն

Մեծ. Տիար Յովհաննէս Թորոսեան
Իւսիկուտար Ս. Կարապետի թաղէն

Մեծ. Տիար Սէքսան Սաղայեան
Գարակէօմիլիկի միացեալ թաղէն

Մեծ Տեարք Կարապետ Փանոսեան
Յովհաննէս Թորոսեան

Պալատի թաղէն

Մեծ. Տեարք Տիգրան Բարազամեան
Յովհաննէս Կասեան
Սահակ Ղաղարոսեան

Ինչպէս կ'տեսնուի վերոյդրեալ ցանկէն, երեք անձինք կան, Տեարք Ս. Աղնաւոր, Կ. Փանոսեան և Յ. Թորոսեան, որք երկու այլ և այլ թաղերէ միանգամայն երեսփոխան ընտրուած են, և որք զիրենք ներկայացուցիչ ընտրող թաղերէն որուն երեսփոխանութիւնն ալ որ ընդունին, տարակոյս չ'կայ թէ մերժուելով բացը մնացող թաղը նորէն ընտրութիւն մը կատարել պիտի պարտաւորի, որով ընտրական գործողութիւնք այսպէս բաւական պիտի երկարին, և պարապ տեղը ժամանակի կորստեան առիթ տրուելով, նոր ընտրութեանց ամբողջ տեղեկագիրներն ընդհ. ժողովոյ յառաջիկայ յունիս ևի նիստին հասնին անգամ կասկածելի ըլլալ կ'թուի :

Մենք այս տարապարտ ժամանակի կորստեան և անպատեհութեան առաջն առնելու նպատակաւ էր որ անցեալ շաբթու այս մասին համառօտ դիտողութիւն մ' ըրինք, որ եթէ ըստ արժանւոյն նկատողութեան առնուելով, իւրաքանչիւր թաղ իրեն յատուկ ընտրելիին վրայ համաձայնած լինէր, այս անտեղութիւնն ալ յառաջ եկած չ'էր ըլլար :

Սակայն ինչ որ ալ ըլլայ, եղածը եղած է, հարկ անհրաժեշտ է որ ընտրող, ժողովներն անմիջապէս և

առանց վայրկեան մ' իսկ կորսնցնելու, իրենց պակասեալ երեսփոխանաց տեղը նոր ընտրութեամբ լեցնելով, օր յառաջ տեղեկագիրնին ընդհ. ժողովոյ յառաջիկայ նստին հասցնելու փութան :

Մենք գոհ ենք որ իւրաքանչիւր թաղ իւր արժանաւոր ներկայացուցիչներն ընտրելու համար այս անգամ ազնիւ ճաշակ և գովելի եռանդ մը ցոյց տըլաւ :

ԹՕՓԳՍԱՌՈՒՅԻ ԼՈՒՍԻՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն ընկերութեան Ատենապետին և Ատենադպրին ստորագրութեամբը նամակ մը հրատարակեցինք մեր նախընթաց թուով, որով կ'պնդէին թէ՛ նախորդ թերթով պատմուած Թօփգարույի նոյն ընկերութեան զբօսարանը՝ ընկերութեան անդամոց մէկ քանին և նուազածուաց մէջ պատահած անլայել և անպատեհ դէպքը բնաւ տեղի չ'է ունեցած :

Ինչպէ՞ս տեղի ունեցած չըլլալը կ'համարձակին պնդել ընկերութեան ատենապետն ու ատենադպրին հրապարակաւ այնպիսի իրողութիւն մը, որ ո՛չ միայն նոյն կիրակի երեկոյին յիշեալ զբօսարանը իրօք տեղի ունեցած է ընկերութեան անդամոց և նուազածուաց մէջ, այլ և մէկ քանի օր ալ շարունակ շուկայն, Ուղուն չարչըն, իրենց խանութներուն առաջը, հազար ու մէկ օտարազգեաց առջև, փոխադարձաբար նուազածուաց հետ այնպիսի հայհոյութիւններ տեղի ունեցած են, որ յիշեալ ընկերութեան անդամոց պատիւ մը չբերելէն զատ, Ազգին ալ մեծ անպատուութիւն կ'բերէ :

Գալով ոստիկանութեան դիմուած ըլլալու կամ չըլլալու կետին, մենք դիտենք թէ ոստիկանութեան դիմուած է, բայց եթէ ոստիկանութեան հրաւիրուած չեն, կրնայ ըլլալ որ վերջէն երկու կողմն ալ համաձայնած և գործերնին կարգադրած ըլլան :

Ինչդիրը ոստիկանութեան երթալուն կամ չերթալուն վրայ չէ, այլ յիշեալ զբօսարանին մէջ կիրակի երեկոյ անկարգ և ամօթալի կռիւ մը պատահելուն վրայ էր, որոյ տեղի տուողը ո՛վ որ ալ ըլլայ, դարձեալ այսպիսի դէպքի մը պատասխանատուութիւնը ընկերութեանը պատուոյն պատկանելով, իրաւամբ կ'պարտաւորէ մեզ ըսելու թէ՛ այդ տեղը ընկերութեան մը կեդրոնավայրը չ'լինար կոչուել :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Զմիւռնիոյ կուսակալութեան Ա. Թարգման Թագ-թաղեան Տիրան Էֆէնտի, Վեհ. Սուլթանին կողմէն առաջին աստիճանի Զրդ կարգի պաշտօնավարութիւն, և Զմիւռնիոյ զինուորական հրամանատար Հիմի փաշայի ալ Ֆէրիքութեան աստիճան շնորհուեր է :

—Ռուսիոյ Զարն ալ Ազէկասնդր-Նէվաքիւ պատուա- նշանին Մեծ ժապաւէնը շնորհեր է Ռէուֆ փաշայի, որ Փէթրսպուրկի գնացած էր Վեհ. Սուլթանին կողմէն նոր Զա- րին գահակալութիւնն շնորհաւորելու :

—Անցեալներն Մշակ ուստաւայ թերթէն քաղելով տեղ- ւոյս լրաթերթը կ'ձանուցանէին թէ՛ Վանայ կառավարութիւ- նը տեղացի Հայոցմէ 800 հրացան ժողովր է : Վանէն այս օրերս դեռ նոր մայրաքաղաքս հասնող վտահուլթեան ար- ժանի հայ պաշտօնավարի մը հարցուելով այսպիսի լրոյ մը ստուգութիւնը, սա բացէ իրայ կ'ժխտէ այսպիսի իրողու- թիւն մը եւ կ'հաւաստէ թէ՛ բնաւ ատանկ բան մը տեղի չէ ունեցած :

Մշակի տուած վերոյիշեալ լրոյն անստոյգ ըլլալը կ'հաս- տատուի նաեւ Անդղիոյ Խորհրդարանի մայիս 12ի նիստին մէջ, Պ. Պրայսի ըրած մէկ հարցմանն ի պատասխանի՝ Սըր Զարլը Տիլքի ըրած յայտարարութեամբը, յորում արտաքին գործոց խորհրդականը կըսէ թէ՛ Վանին առնուած տեղե- կադրի մը նայելով, տեղական իշխանութիւնք առհասարակ Հայ ժողովրդեան նկատմամբ չնչ ինչ մասնաւոր միջոցներ ձեռք առեր են, Հայոց (գաւառական) ժողովին հրաման ե- դեր է որ Հայաստանի մէջ գտնուած բոլոր ազգ. ընկերու- թեանց ցանկն ու նպատակը ծանուցանէ Բ. Գրան հաղոր- դելու համար : Քանի մ'ամսէ ի վեր բացուած քլիւպը (ը- սարանը), մէջը ատենախօսութիւններ ըլլալուն պատճառաւ գոցուեր է . իսկ Քրիստոնեայ հասարակութեանց ձեռքէն ղէնքեր ժողովելու մասին տեղեկութիւն մը չկայ :

—Անգղիական լրագրաց քաշուած հեռագիրք կըսեն թէ Պուլկարիոյ իշխանը տէրութեանց հիւպատոսներն իւր պա- լատը կոչել տալով, պատերազմի պաշտօնեայ եւ առժամ- եայ պաշտօնէութեան գահերէց Էհրէնրօթ զօրապեան ծա- նուցեր է նոցա թէ՛ իշխանը Սահմանադրութիւնը դադրե- ցնելու եւ երկրին բովանդակ իշխանութիւնը ինքն ստանձ- նելու պարտաւորեալ է : —Ստով հանդերձ Սըր Զարլը Տիլք անդգ. Խորհրդարանի մայիս 12ի նիստին մէջ, խել մը հարց- մանց պատասխանելու միջոցին, յայտներ է նաեւ թէ՛ ինքը չկարծեր որ տէրութիւնք Պուլկարիոյ Սահմանադրութեան նոր փոփոխուելիք կետերն վաւերացնեն :

—Վովկասու ուստական սպայակոյտի անդամներէն հայ- ազգի Պ. Սամսոն Աերիկէվիչ Զավրիեանց հազարապեան մայ- րաքաղաքս եկած է Ռուսիոյ դեսպանատան գլխաւորական կցորդի պաշտօնով :

—Գերմանացի սպայ մի զօրաց կուրծքը թշնամեաց դնտակներէն պահպանելու զօրեղ միջոց մի գտնելու համար երկար ժամանակ աշխատելէ յետոյ՝ 11/2 հազարամետր հաս- տութեամբ եւ 1,075 կրամ (իբրեւ 360 տրամ) ծանրութեամբ մետաղեայ տախտակ մի շինել տուած է, որ իւր նպատակին յաջողպպէս կը ծառայէ : Տախտակը փորձի ենթարկուեցաւ ապրիլ 22 ին : Մարթինի լախարերան հրացան մի 175 մէթ- րոյ հեռաորութենէ գնտակ արձակելով, գնտակներէն եր- կուքը տախտակին եզրը միայն կրցին զնստել . իսկ տախտա- կին երեսին զարնուողները պարզ հետք մի միայն թողուցին նորա վերայ . միայն թէ երկու գնտակ մի եւ նոյն կէտին հանդիպելով, երկրորդը կրցաւ ծակել զայն :

—Վանձուց պաշտօնէութեան քարտուղարներէն Խալէթ պէյ եւ ուրիշ 6 էֆէնտիներ Փեղաղխանէն վերադարձին իրենց մակոյքը մահմետական ընտանիքի մը նաւակին մօտե-

ցնելով, թիով շուր կը սրակեն նաւակին վրայ, սակայն այսչափով ալ չգտնանալով, նաւակը կը մտնեն, նաւաբարը կը ծեծեն եւ կանանց անլուր թշնամանքներ կընեն . այն- պէս որ զործը մեծնալով, յիշեալ էֆէնտիները կը ձերբա- կալուին եւ ոստիկանութեան բանար կը տարուին :

—Հագըգաթ կ'հաւաստէ թէ, Քրդաց՝ անցեալ տար- ունէ աւելի մեծ զօրութեամբ Պարսկաստանի վրայ յարձա- կելու պատրաստուելին տեսնուելով, Պարսից դեսպան Սօհաին խան Բ. Գրան ուշադրութիւնը հրաւիրեր է այս բա- նին վրայ : —Սթամպուլ ալ միւսնոյն պատրաստութիւնը ծանուցանելով կ'յաւելու ըսել թէ՛ այնպէս կերելի որ այս գործը քիչ քիչ պարսկա-քրդական խնդրոյ մը կերպարանքը պիտի առնու :

—Ալպանիոյ մէջ Տէրվիշ բաշա 20 վաշտ զօրօք այժմ բարեկարգութիւնը վերահաստատելու կաշխատի, ինքը այ- ժմ Փրիզրէնտ է, ուր Ալպանիացի ապստամբ գլխաւորաց դատը տեսնելու եւ պատիժնին տնօրինելու գործովը կըզ- րաղի եղեր :

—Փէթրսպուրկէն Վօլթէր գաղղ. թերթին քաշուած հեռագիր մը կըսէ թէ՛ կոսն Լորիս Մէլիքօֆ զօրապետը մօտերս պիտի մեկնի Փէթրսպուրկէն օտար երկիր մ'եր- թալու համար, եւ չպիտի կրնայ Ռուսաստան վերադառնալ մինչեւ որ մասնաւոր արտօնութիւն մը չստանայ վերադար- ձի, եւ այդ արտօնութիւնն ալ շատ երկար առեն պիտի չը տրուի իրեն : Ասի եթէ ստոյգ է՝ պարզապէս հայազգի զօ- րապետին տարադրութիւնն ըսել է, որն որ հաւանական է թէ՛ իրեն յաջորդող Նինաթիվ զօրապետին թելադրու- թեամբն եղած լինի :

—Երկուշաբթի սուաւօս օդը միղապատ ըլլալուն պատ- ճառաւ, Նի քէթին Սալաճաք բանող 2 թիւ շոգենաւը Հա- րէմ Իսկէլիսին վեր Գաւազի բացը՝ աւաղի վրայ խրեր է, իսկ անձի կորուստ չկայ : —Նմանապէս ցորենաբարձ անգղ. նաւ մ'ալ Սալաճաքի բացը ցամաքը խրելով, ուրիշ քանի մը մեծ շոգենաներ սկսեր են մէջի բեռը պարպելու :

—Մայիս 5ին Փէքրիտաղի բանար գտնուող տաճիկ կա- լանաւօրք ապստամբելով, պատուհանաց երկաթեայ վան- դակաձողերը յափշտակելնուն պէս կ'յարձակին բանապահ զօրաց վրայ եւ կռիւ մնէ կսկսի, որոյ մէջ վիւժոտներէն քանի մը հողի վիրաւորուելով, բանտարկելոցմէ ալ Յաման անուն մէկը կ'մեռնի եւ ուրիշ երկուք ալ կ'վիրաւորուին եւ կալանաւօրաց փորձն անյաջող կ'մնայ :

—Կիմանանք թէ՛ Քերայ երկաթագործ Ռափայէլ անուն հայազգի երկատարդ մը, բշ. օր ոստիկանութեան կողմանէ ձերբակալուելով, ձեռքերը դաստակապով պրկեալ, ուղ- դակի Երլտըզի պալատը տարուեր է :

—Անգղիացի մի կը գրէ առ Մէսէնձըր իբրեւ ականա- տես վկայ, թէ Վալիտէ Սուլթանն ուրբաթ օրը կանքով Երլտըզի պալատը վերադարձած միջոցին, երկու սեռէ եւ ամեն հասակէ բաղմաթիւ Մուհամմեդներ պաշարեցին կառ- քը . Վալիտէ Սուլթանն ափ մի արծաթ դրամ տուաւ իւր երկու ներքնի սպասաւօրաց, որպէս զի խեղճ գաղ- թականներուն տան բայց նոքա իրենց մէջ բաժնեցին զայն : Մուհամմեդներուն ձեռքը բնաւ բան մը չպիտի անցնէր, եթէ ողորմած իշխանուէն, կառքը նորէն ձամբայ ելած միջոցին, ինք իւր ձեռամբ քանի մը դրուշ ալ կառքէն դուրս չնետէր : Անգղիացին այս ոչէպքն հոն կեցող սպայի մի պատմեր է եւ

նա ալ խորհուրդ տուեր է որ իւր դեսպանատան իմաց տայ զի ինք (սպայն) կարող չէ այդ անկանոնութիւնն արգիլել տալու :

— Սթանտարտ անգղ . թերթը ցարդ անտիպ դեսպանական գրութիւն մը կ'հրատարակէ , բանակցութեան մը վերայ որ տեղի ունեցեր է Պ . Վատէնկիթօնի , Սալիսպրի մարդիկին եւ Գորթի կոմսին մէջ , յորում համաձայնեք են որ եթէ Գազդիա Թունուզը գրաւէ , Իտալիա ալ Սփրիկեան Տըրիպօլիսը պիտի կրնայ գրաւել :

— Ռուսիոյ Ձարը խոստացեր է Մոսկուայի քաղաքապետին որ գահը Մոսկուա պիտի փոխադրէ :

— Սելանիկի շրջակայքը ասկէ երկու ամիս առաջ աւաղակներէն յախտակուելով լեռը տարւող Անգլիացի Պ . Սիլվէր կալուածատէրն աղատուելով , երէկ երեկոյ Սելանիկ համիլը կ'սպասուի եղեր :

Փրկանաց զինը դեռ չ'զիտցուիր : Դարձեալ նոյն կողմերն Նիքօ աւաղակապետին խումբը Վօտինայի մօտերը տաճիկ հարուստ կալուածատէր մը յախտակուելով լեռը տարեր եւ 6000 ոսկի փրկանք կ'պահանջեն եղեր :

— Վեհափառ Սուլթանին փեսայ Նէճիպ փաշայի հայրըն Սամի փաշայ անցեալ օր 89 տարեկան վախճանելով մարմինը մեծ հանդիսիւ Սուլթան Մահմուտի դամբանարանը թաղուեր է :

— Բ . Դրան եւ Թունուզի մէջ քաղաքական յարաբերութիւնք վերջնապէս խզուեր են այս շարթու :

— Չմիւռնիոյ ոստիկանութեան պետը Էմին փաշայ անցեալ դէ . օր զիշերանց իւր պաշտօնատունը թողով խոյս տուեր է , իսկ փախուսան իմացուելով հրամանատար Հիլմի փաշայ զանի ձերբակալեր եւ զօրանոցը բանտարկեր է :

— Պօլսոյ նորընտիր անգղ . դեսպան լորտ Տիւֆըրընի ընամանիքը բշ . օր մայրաքաղաքս հասան , ինքնալ 13 օրէն պիտի դայ : Պ Կօչէն ալ գալ դշ . օր Լոնտրա պիտի մեկնի :

— Սրեւել . Բումէլիի կուսակալ Ալէքօ փաշայի քանի մը օրէն մայրաքաղաքս գալը կ'սպասուի :

— Կ'ըսուի թէ Միտհատ փաշայ հեռագրեր է 'ի Փարիզ իրեն ծանօթ փաստաբաններէն մէկ քանին հոս բերել տալու համար , որպէս զի փոխանորդ կարգէ իրեն՝ տեսնուելիք իւր հրապարակային դատին մէջ : Ասոնց մէջ Պ . Լաշօ փաստաբանին անունն ալ կ'ոչուի որ զՊաղէն մարաշխանն պաշտպանեց :

— Ռուսիա ծանուցագիր մ'ուղղեր է Բ . Դրան որ Շէյխ Աւպէյտուլլահի յարձակման պատրաստութեանց առաջքն առնու :

— Ծովային պաշտօնի մը մէջ գտնուող Միհրան էֆ . անուն Բերացի երիտասարդ մը երեկ ցերեկին կամրջէն ներսի շողենաւուց մէկն Ֆէնէրի բացը ինքզինքը ծովը կ'նետէ , իսկ օգնութեան հասնելով կաղատեն զինքը եւ ցամաքը կ'հանեն : — Նոյն շոգենաւներէն 7 թիւն ալ երեկ երեկոյ նաւակի մը զարնելով դայն կ'խորտակէ , որոյ մէջի անցորդներն ու նաւավարը ծովն ինչալով , մօտակայ օսմ . գրահաւորի մը նաւաստեաց օգնութեամբը ողջ առողջ կաղատին :

— Ազսէրայ բշ . օր տաճիկ կին մը ինքզինքը իր տանը հօրը կ'նետէ , բայց դրացիք վրայ հասնելով կաղատեն զինքը :

— Բերայ Նազանէ փողոցն անցեալ շաբթու մարդ մը իր տանը դրանն առաջը օղիի սպաս մը դրած քէյֆ ընելու

ատեն , յանկարծ 4 հոգի յարձակելով , վրան գլուխը կ'խուզարկեն եւ բան մը չգտնելով կ'փախչին , մարդը կորուստ մը չունենար թէպէտ , բայց քէյֆը քիթէն բերնէն կուգայ :

— Ղալաթիա Վիթալի խանին ետեւը սենեակի մը մէջ դողերը պատ մը ծակելու գրազած ատեննին , ոստիկանութենէն իմացուելով , դողերէն մին որ քասա բացող նշանաւոր յոյն մըն էր կ'բռնուի , իսկ 2 ընկերներն կ'փախչին :

— Կայսեր անձնական գանձուն վերատեսուչ Գազադեան Յակոբ էֆ . Սուլթանին երկու քերց աւմուսնութեանն առթիւ , հարսանեաց պատրաստութեանըն ու շքեղութեանը մասին տարած ջանիցըն համար՝ նոցա սուլթանուհի մարց կողմէն յատկապէս շնորհակալութեան եւ մեծարանեաց արժանացեր է :

— Պօլիս Թարափճըններն բշ . զիշեր ակնավաճառի մը խանութը մտնելով 200 ոսկուոյ չափ արժէքով դահար վերցնող դողերէն մին 2 օր վերջը Սերքէճիի կողմը կ'բռնուի եւ դողօնին մէկ մասը վրայէն կելլէ :

ՀԱՆՆԵԼՈՒԿ (1)

Ինը ոտքով խիստ տխուր կեանք մը կը վարեմ , ընթերցող , կաղաչեմ ձեզ , կտրեցէք երկուքը , որ ատեն չպիտի ըլլամ ձեզ ատելի , այլ միշտ բաղձալի եւ այսպէս զիս պիտի ընէք երջանիկ :

ԶՈՒՍՐՃԱԼԻՔ

Կիրակի առաւօտ մայր եկեղեցւոյ դրանը առջեւ եասախճիներէն մէկը կնոյ մը կրօնէր :

— Տիկին , կանանց կողմը դացէք , կանանց համար հոս մանալ արգիլեալ է :

— Ինչ ըսելէ կանանց , մալի , ես ներս պիտի մտնամ , վույ վայ կլխուս :

— Ճանրմ , մարիկս , քուրիկս , ինչո՞ւ խօսք չես հասկընար , եկեղեցի երթալ կը փափաքիս կոր նէ ինչո՞ւ կանանց կողմը չես երթարկոր :

— Ես կանանցը մալին չիյտեմ , թող տուր ներս մտնամ , չենէ ինչ խտար ծան ունիմ'նէ հիմայ կը պօռամ :

Ասոր վրայ թ . խորհրդոյ անդամներէն մին վերայ հասնելով , շաբթու մէջ ալ դատ ձեզի համար պիտի ըլլայ ըսաւ որ չարը խափանելով այս անտեղութեանց առաջքն առնուեցաւ :

— 0' , Մերքոն աղա , նա'սըլըն պաքայըմ , էյիսին հօշմըսն :

(1) Սոյն հանելուկը նախ լուծողը՝ մէկ շրջան Մամուլ ստանալու իրաւունք կունենայ :

—Չօք չիւքիւր :

—Կենէ Ստանայօլ թարաֆընտամըսընը :

—Էվլէթ :

—Ճանըմ, թաճիւպ իտէրիմ քի, նտսըլ եաղըն պու սըճաքտա Ստանայօլ քիպի եէրտէ օթուրուրսընը :

—Պունա թաճիւպ հիչ իստէմէզ, ասըլ թաճիւպ իտիլէճէք եէր, պու սէնէ պողաղիչինէ կիտէնլէրէ էթմէլի քի՝ ֆէրահլանալըմ տէյի կիթտիկլէրի հալտէ պու սուրլարաա էյի տօնմայօրլար :

* *

Միւսիւ կոմիկ, քէօյէ նէ վագըթ չըգաճագսընը :

—Տահա վագըթ վար :

—Վագըթ վար տէտիղին նէ օլուեօր, եաղ կէչիւօր, բաղար էրթէսի ալաֆրանկայ յունիս պիբ :

—Սէն ծնա պաղմա :

—Գիմէ պագայըմ :

—Հավայա, պիղէ Գասըմն ԿՅ ի քիպի եօլլար թութույեօր :

* *

Բարեկամ, աղէկ թահսիլտար մը կ'ճանչնա՞ք :

—Գուք մէկ հատ մը ունէիք, ի՞նչ ըրիք անիկայ :

—Ճանըայ տուի անօր, աւելի գործունեայ մէկը կը բնտուեմ կոր որ տեղ մը խրկելուս պէս, անմիջապէս պահանջած ստակա առնէ դայ :

—Էյ ան քու քովինդ գէշ չէր, աղէկ էր ամա, չգիտե՞ս օրթալըլին վիճակը, հիմա գործունէութիւնը ստակ չ'ըներ կոր, չէնէ ուրիշ պատճառ մը կայ :

—Ուրիշ պատճառը սա է թէ՛ առջի թահսիլտարս ամուրի մ'էր, անօր համար ճանբեցի, հիմայ թահսիլտար եղողը, քիչ մը գործունեայ ըլլալու համար, ամուսնացեալ մէկը ըլլալու է որ տեղ մը զրկած ատենս՝ մէկ երթալուն ստակը բրցնէ բերէ :

* *

Մողարիտս աղա, պագարըմ քի էվլատընը չօք սէվէ յօրսուն :

—Էվլէթ, սէվիլէճէլս վախթը շիմտի տիր :

—Նէ՞ տէմէք, էվլատ տէտիղին հէր տայըմ սէվիլեր :

—Խա՛յըր, էվլատ տէտիղին՝ և եաշընա խատար էվլատ տըր, 8 եաշընտա՝ օրթախ տըր, 18 եաշընտա՝ տիւշման տըր :

—Նէտէ՞ն :

—Ձիւնքի և եաշնտա ագլը հիչ պիբ շէյէ էրմէզ պիկիւնահ պիբ չօճուք օլաղնտան ասըլ էվլատ օ

վախթ տըր . 8 ինտէ ագլը էրմէյէ պաշայըպ, հէր կէօրտիւղիւնիւ իսթէր այտըրըր, օլուր սանա պիբ օրթաք, լաքին 18 ինէ պիբ տէֆա կիրտի՞ մի, դայրը կիճէ կիւնտիւղ տիւշիւնէճէսի շու տըր քի, նէ վագըթ աճապա պապամն իշինին պաշընա կէչէճէյիմ տէյի, իշտէ օլուր սանա պաշ պիբ տիւշման :

Ս Տ Ո Ի Գ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Գրաբարեաններն ու Աշխարհաբարեաններն դեռ խոզերնին չբաժնած, հայ լեզուին քաջահմուտ Արթ. Հիւնքեարպէ յէնտեան Տ. Յովհաննէս Հայր, Ստուգաբանական բառգիրքի հաւկիթ մը գլտօրեց հրապարակը, և հիմայ ինքը մէկ կողմ քաշուելով բիբօն վառած, Տէվրիշը, Երզնկացին, Գ.ը, Փ.ը գէմին առնելով մօրուքին տակէն կ'ինդայ :

«Պատարագ» բառին համար՝ մէկը կըսէ թէ՛ պատգարակէն ելած է, միւսը կըսէ թէ՛ «պէտերգայ» բառէն, Էրզնճանին ալ կ'սնդէ թէ՛ «Պէտերկեահ» բառէն ելած է, Ասոնց ամենքն ալ սխալ են. մեզի հարցուելու ըլլայ նէ՛ «պատարագ» բառին արմատը՝ փոր կշտացնելու բառին հոմանիշ է, ինչպէս առակի կարգ ալ անցած է որ երբ փորը կուշտ մէկը կերակուրի հրամայելու ըլլաս նէ՛ —«ես քանի մը պատարագ տեսած եմ» կըսէ :

«Ձեռն» բառը յունարէն «քիր» բառին հետ լըծորդ է եղեր, և ձմեռն ալ «քիմեռն» էն կ'ելլէ եղեր :

Քիմեռնէն աղէկ մաստիքա ելլելը գիտէ ինք, բայց քիմեռնէն ձմեռ ելլելը նոր կ'լսենք կոր :

Թագը՝ պարսկերէն թաճ բառէն, և թագաւորն ալ պարսկերէն թաճիւր բառէն ելլելը ո՛չ ընդունելի է եղեր և ոչ մերթելի : —Սնանկ էն սա թագաւորը երբ եւ ուրիկէ պիտի ելլէ, ան չենք գիտեր կոր :

Մէկը կըսէ թէ՛ «պետ» հայերէն բառէն ելած է սիփուխտէն (բռնի մեւծանել) պարսիկ բառը, միւսն ալ թէ՛ պարսիկ սիւփիւրտէն (կոխել) բառը : Այս բառին ուրիկէ ելլելը խնդիր ընելն անգամ ամօթ է, վասն զի աշխարք գիտէ թէ՛ «սիւփիւրկէն» մինակ թօփգաբույէն կ'ելլէ :

Յունական «թե» և «թես» բառերուն ածանց են եղեր հայ «գի» և «գիս» բառերը :

Այս և ասոնց նման բառերուն ուրիկէ ելլելը ու շի ուշիկ հետադօտելովին հանդերձ, մինակ սա մոռցած են քննելու թէ՛ :

Հաւը մի հաւկիթէն կ'ելլէ, հաւկիթը մի հաւէն :

ՄԻԹՀԱՏ ՓԱՇԱՅԻ

Ձ Ե Ր Բ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ձմիւռնիայէն հետեւեալ մանրամասն պարագայները կը հեռագրեն Մէսէնճըրի, Միթհատ փաշայի ձերբակալութեան վրայ :

Մայիս 3/17ի առաւօտուն քաղաքիս բնակիչները անգորր քունէ մը յուզեալ արթնցան, առջի գիշեր Միթհատ փաշան իւր տան մէջ ձերբակալելու համար եղած փորձն խմանալով, Կերեի թէ փաշան ժամը 1 ին յանկարծակի արթնցեր է փողերու ձայնէն, որ մերձակայ զօրանոցին զինուորները ի զէն կոչելու համար հրամանատարը հնչել կուտար, Յանկարծ անկողինէն ցատկեց, և պատուհանը վազելով տեսաւ որ Հիլմի փաշա, Վեհ. Սուլթանին Պօլսէն նոր եկած մէկ թիկնապահին հետ կայսերական զօրօք դէպ ի իւր ապարանքը կը յառաջանար : Փաշան կայսերական զօրաց դէպ ի իւր ապարանքը գիշերանց գալը տեսնելով զարհուրեցաւ . ածապարանօք զգետները հագաւ, և իւր հաւատարիմ մէկ ծառային հետ փութաց կանանոցի կողման պարտիզին փոքրիկ դռնէն փախչիլ . այս դուռը գաղտնի էր և Քիոսի երկրաշարժէն ի վեր բանալ տուած էր փաշան, ուստի միւս դրանց նման այս փոքր դրան առջին ալ պահպանութեան համար զօրք կեցնելու ուշագրութիւն չէր եղած :

Քիչ մը հետիոտն երթալէ վերջը Միթհատ փաշա վարձու կառք մը գտնելու բաղձն ունեցաւ, և մէջը նետուելով ամենայն արագութեամբ Գաղղիական հիւպատոսարանը դիմեց : Գաղղիոյ հիւպատոսը Պ. Բէլիսիէ՛ առաւօտուն բոլոր հիւպատոսաց շրջաբերական մը ղրկելով զանոնք իւր հիւպատոսարանը հրաւիրեց : Հիւպատոսները երբ եկան, Միթհատ փաշան անոնց ներկայացաւ և գլխուն եկածը պատմելով բոլոր տէրութեանց պաշտպանութիւնը ինզրեց : Հիւպատոսը հաւանեցան այս առաջարկութեան . բայց միանգամայն իրենց տէրութիւններէն հրահանգի ըստ պատեցին : Փաշան յայտարարեց թէ ինքը խոյս տալ չուզեր, այլ ընդ հակառակն իրեն դէմ եղած ամբաստանութեանց արգար դատաստան կը պահանջէ, և կը փախարի միանգամայն որ տէրութեանց հսկողութեանը ներքև կատարուի այս դատաստանը :

«Հիլմի բաշա ամբողջ կէս օր շարունակ հեռագրաւ բանակցելով Պօլսոյ հետ, բնաւ թոյլ չտուաւ որ ուրիշ մասնաւոր հեռագրեր զարնուին, բայց յետոյ հիւպատոսաց պահանջմամբ անոնց հեռագրերն ընդունուեցան, քիչ մը վերջը հասարակաց հեռագրերն ալ ընդունուիլ սկսան : Գաղղիոյ հիւպատոսարանին բոլոր մերձակայ փողոցները մինչև նաւամատոյցը

զօրքերով պաշարուած էին . նաւահանգստին մօտի նաւակներուն և նաւերուն հրաման եղաւ որ նաւամատոյցէն եւ ծովեզերքէն հեռանան : Օսմանեան զբահաւորները առջի օր Գաղղիայէն եկած դեղեցիկ զրահաւորի մը շուրջը կ'հսկէին, միշտ շարժման վիճակի մէջ, վասն զի կ'կարծուէր թէ Միթհատ բաշան փախցնել պիտի փորձուի այդ շողենաւով :

Հիլմի բաշա հետեւեալ օրն հիւպատոսաց շրջաբերական մ'ուղղելով իւր կուսակալի տեղապահութիւնը և Միթհատ բաշայի պաշտօնանկութիւնը ծանոյց :

Միջօրէին Գաղղիոյ հիւպատոսը հրահանգ ընդունեցաւ թէ անհնար է զինքը պաշտպանել . մի քանի ուրիշ հիւպատոսներ ալ միևնոյն հրահանգն ընդունեցան, միայն Անգղիոյ հիւպատոսը պատասխան չտացաւ . հիւպատոսը նոյն երեկոյին անգղիական դեսպանատունը հրաւիրուեցան վերստին ժողով դումարելու համար . նոյն միջոցին Միթհատ բաշա Պօլսէն Արդարութեան պաշտօնեայ ձէվտէթ բաշայէն ապահովութիւն ստացաւ . թէ իւր անձին զնաս մը չկայ և թէ անկողմնակալ ատեանի մ'առջև նոյն իսկ Ձմիւռնիոյ մէջ պիտի դատուի : Ասոր վրայ բաշան որոշեց անձնատուր ըլլալ տեղւոյն զինուորական հրամանատարին . քիչ մը վերջը Պ. Բէլիսիէ և բաշային մտերիմ մէկ բարեկամը զինքը մինչև հիւպատոսարանին դուռը տանելով կառքը դրին, Հիլմի բաշա, Վեհ. Սուլթանին մէկ թիկնապահը և մի քանի սպայներ Միթհատ բաշան զօրանոց տարին, և հոն արգելման տակ առին :

Շաբաթ առաւօտ ձէվտէթ բաշան և այլ դատական պաշտօնատարք Ձմիւռնիայէն ճանբայ ելան, իրենց հետ առնելով Միթհատ բաշան : Սթանպուլ արքունի շողենաւն, որոյ մէջ կ'գտնուէին, կիրակի գիշեր կ. Պօլիս հասաւ, Միթհատ բաշան Տօլմա սաղլէ հանուեցաւ ընդ հսկողութեամբ, ուր կայսերական պալատէն ղրկուած կառքեր իրեն կապատէին, եւ երջողի պալատը տարուեցաւ, ուր պիտի մնայ միւս ամբաստանելոյ հետ :

ԱՊՏ ԻՒԼ ԱԶԻԶԻ

Մ Պ Ա Ն Մ Ա Ն Պ Ա Ր Ա Գ Ա Յ Ն Ե Ր Ն

Տաճիկ թերթերն կ'ըսեն թէ գլխաւոր թերագիրներն Մէհմետ Ռիշաի, Միահատ, Տամատ Մահմուտ և Տամատ Նուրի բաշաներն Փէհլիվան Մստաֆան ձէզայիլըցի Մստաֆան և Պէքճի Մէհմէտը 100ական ոսկի ամսակամով պալատան մէջ պաշտօնի գրեր, և 30ական ոսկի ալ նախատ տուեր են անոնց նոր հա-

գուստ շինելու, և ասանց ձեռօրը սպաննել տուեր են գահազուրկ կայսրը: ԱպտիւլԱղիղի քով Սուլթան Սէլիմէն մնացած թուր մը կայ եղեր, զոր սենեկապետ Փախրի պէյ յափշտակեր է: Կհաւաստեն թէ Փախրի պէյի, Տամատ Մահմուտ և Տամատ Նուրի փաշաներուն դոյքերն ու կալուածական բոլոր սեպհականութիւններն արգելքի ներքև դրուեր են յարքունիս գրաւուելու համար, եթէ այն ատեն կայսպալատէն մեծարանակ գոհարեղէններ և այլ թանկագին նիւթեր յափշտակած ըլլալնուն ամբաստանութիւնը ստուգուի կատարուելիք դատաստանին մէջ, Տամատ Մահմուտ փաշայի համար ալ, որ բանտարկեալ է, կ'ըսուի թէ ծանր հիւանդ է եղեր:

Նմանապէս տաճիկ թերթերուն ըսածին նայելով, ԱպտիւլԱղիղի մահուանը վրայ շինուած տեղեկագիրն ստորագրող բժիշկներէն ոմանք հարցաքննութեան ենթարկուելով յայտներ են թէ վախճանեալ Սուլթանին դիակը կտաններով պատած և թեւերն ալ ծածկուած ցոյց տրուելով իրենց, հետևաբար իրենք ալ հարկադրուեր են բոլորովին հարևանցի կերպով քննել զայն և տեղեկագրել: Սակայն այդ բժշկական տեղեկագիրը, ինչպէս տեսնուեցաւ մեր նախորդ թուոյն մէջ, 20ի չափ գլխաւոր բժիշկներէ ստորագրեալ էր, յորս կան Սնդղիոյ, Գաղղիոյ եւ Աւստրիոյ դեսպանատանց բժիշկներն, որոցմէ մին անգղ. դեսպանատան բժիշկ Տօքթօր Տիքսըն Սթանտարտ անգղ. թերթին մէջ նամակ մը հրատարակելով կրսէ թէ — «ԱպտիւլԱղիղի մահուան նկատմամբ վերջերս երեւան ելած զրոյցք հակառակ են «յայտնի ճշմարտութեան, զոր ես ստուգած եմ նորա մարմինը քննելով դործակցութեամբ Տօքթօր Մավրօյէնիի»:

«Ուշի ուշով քննեցի ԱպտիւլԱղիղի դուլը, կուրբը, պարանոցը, փորը, կուրծքը, կրնալին ու անգամներն և բնաւ վերք կամ բռնութեան նշան մը չը կայր մարմնոյն վրայ, բաց ի արմուկներուն (տիրսէկ) տակի վերքերէն, որք դաշունով և դանակով բացուած վերքեր չէին կրնար ըլլալ: Մեռած ատենն ալ մարտնչում մը տեղի չունենալուն ապացոյցն ալ սա էր թէ վերքերէն վազած արեան կաթիլներուն՝ սենեկին մէջ ասօլին անդին ցայտած կամ որսկուած նշան մը բնաւ չկայ, այլ նորա նստած քանաբէին և ձախ թեկն տակի փախածին վրայմիայն մակարդեալ արիւն մը կ'կենար, ուստի և անհնար էր որ մաքառում մ'եղած լինի»:

Իսկ աստիկ թերթերն, առանց մաքառման իսկ բունի սպանութիւն մը կատարուած ըլլալուն հուտնականութիւնն աւելցնելու համար, կ'ըսեն թէ՝ ա-

ռաջին սենեկապետ Փախրի պէյ ԱպտիւլԱղիղի քթին «քրօքօքօրմ» տալով զայն մարեցուցեր և այնպէս առանց ընդդիմութիւն մը կենալու՝ զինքն սպաններ են:

Նմանապէս տաճիկ թերթերն կ'հաւաստեն թէ թուրք զինուորական բժիշկ մը որ ամենէն առաջ կանչուեր է եղեր ԱպտիւլԱղիղի մարմինը քննելու, նըրմարելով որ արիւնը տակաւին կ'հոսէր և սիրտը դեռ կ'բարախի եղեր, փորձել ուղեր է դանի վերահենդանացնելու, բազկին ծակած երակները կապելով, բայց զինքն արգիլեր և վերջէն բռներ եէմէն արքունիքը են:

— Զմիւռնիայէն կ'ծանուցուի թէ նախկին մեծ եպարդոս Մէհմէտ Ռիշտի բաշան, թէև առողջական յոյժ գէշ վիճակի մէջ, փութացեր է Զմիւռնիա դալ ճէվտէթ բաշայի գալը լսելուն պէս, և ինքնին ներկայացեր է հարցաքննութիւն կրելու համար:

— Սուլթան Աղիղի երկու որդիքն, Եուսուֆ իզէտալին և ճէլալէտալին Էֆէնտիններն, որք չափահաս են այժմ, իրենց հայրն սպաննողներու դէմ բացուած դատին մէջ դատախազ պիտի հանդիսանան:

— Վազթ և Թէրճէմանը-Հագըղաթ երկու որդի վեր ոչինչ տեղեկութիւն չեն տուած ԱպտիւլԱղիղի մահուան և ձերբակալելոյ գործին վրայ: — Թէրճէմանը-Հագըղաթ կ'ինդրէ մայրաքաղաքիս ոչ-թուրք թերթերէն որ աճապարանօք խորհրդածութիւն չընեն, զի բուն իրողութիւնք ի մօտոյ երևան պիտի ելնեն:

... Խմբագիր

Ձեր պատուական թերթի մէջ ներկայ յօդուածոյս անկիւն մը շնորհել բարեհաճելնիդ կը խնդրուի:

Գասն ամիսէ ի վեր Պօլիս եկած եւ Սամաթիոյ Նորթաղի Գլխաղի Ս. Յակոբայ եկեղեցոյ մէջ, ինչպէս յայտնի է, քարոզութեան պաշտօն կը վարեմք: Իսկ այժմ որովհետև այլ եւս ընդ հուպ Պօլսէ մեկնելու մտադիր ենք, դնալ հոն՝ ուր կը հրամայեն մեզ վերին Տեսչութեան կամք եւ անօրինութիւն, սեպուհ պարտ անձինս կը համարիմք հրապարակաւ եւս մեր շնորհակալքը յայտնել այն ամեն պատուական անձանց եւ բարեկամաց, որք զմեզ պատուաւիրեցին, եւ մանաւանդ թաղիս նախորդ եւ ներկայ Թագ. Թորհրդոյ Մեծ. Անդամօց, որ ամենայն սիրով եւ եղբայրաբար մեզ գործակից դտան ի ջանս եւ ի վաստակս եկեղեցոյ եւ վարժարանի, որոյ ցարդ բաց մնալուն աջակցելով աշխատեցան եւ զարդիս իսկ կաշխատին, եւ վարժարանի այժմեան բարոյական վիճակը արդարապէս խօսելով դոյլի բարեկարգութեան մէջ կը գտնուի: Իսկ որովհետև թաղի եւ կեղեցին չունի եւ ոչ ինչ անչարժ կալուածական մի արդիւնք, եւ մանաւանդ 90 օսմ. ոսկւայ մի Տաճիկ կնոջ տուհոսաւոր պարտոց ներքեւ կը գտնուի, ի բաց առեալ նորագութեանց պատահական եւ փայտի ու ածխոյ տարեկան ծախքերը, վարժապետաց, վարժուհւոյ, ժամակազաց, լուսարարի եւ այլ անհրաժեշտ ծախուց դուսարը ամսական

1500 զրոյի կը յանդի, որ կը հայթայթուի միմիայն բանկային մոմավաճառութեան, թապալներու, կնուների, ննջեցեալի արդեամբք, եւ սոցին նման շարժական եւ անհատաւ կամ տեղի, եւ այսու ամենայնիւ լուսարար տիրացու Մ. Յովակիմի տուժարաւ հարիւր կտորէ աւելի մեր ձեռքը եկեղեցւոյ մէջ յիշատակ եւս թողով թէեւ կը մեկնիմք, սահայն թաղիս երկսեռ մանկտին ըստ մեծի մասին աղքատ եւ չքաւոր ծնողաց զաւակներ լինելով խիստ կարօտ են բարեւէր անձանց խնամոց եւ ձեռնտուութեան, եւ վարժարանի շէնքին կիտախուղ դիրքն անյարմար եւ 100է աւելի երկսեռ մանկտին, որոնք վերջին ատենս օր ըստ օրէ կը բազմանան, պատասպարելու բոլորովին անկարող վիճակի մէջ ըլլալով, Ազգասէր անձանց ուշադրութեանը յանձնելով, ի վերջոյ ներկայիս կը փութամք եւս ծանուցանել մեր այն ամեն բարեկամաց, որք կամին տեսակցիլ մեզի հետ, թէ մինչեւ ցճոգեգալուստ Ուրբաթ եւ Կիրակի օրեր յատկապէս սոյն եկեղեցին գտնուելու լինի թէ՛ խաչահանդատեան կրնան ներկայ գտնուիլ եւ թէ կրնան մէկ վերջին տեսակցութիւն մ'ալ բնել, եթէ կը բարեհաճին:

Յ Մայիս 1881 Մնամ աղօթարար Ազգիս
Նոր թաղ Սամաթիոյ Միքէլ Եպիս. Տէրբանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա.Ձ.Գ. Ս. ՓԲԿԶԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Հոգաբարձութիւնս կը փութայ ներկայ յայտարարութեամբ ծանուցանել արգոյ ազգայնոց որ ամսոյս 21 ին Համբարձման տօնն եւ միանգամայն Ազգային Հիւանդանոցի հիմնարկութեան Յարգ տարեդարձն լինելով ըստ սովորութեան նոյն օրն հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի յիշեալ հաստատութեան մատրան մէջ:

Ուստի Հոգաբարձութիւնս կը խնդրէ արգոյ ազգայիններէ որ նոյն օրն բարեհաճին այցելել եւ մխիթարել թըշուառ խղճայիները:

11 Մայիս 1881
Գրաս. Ազգ. Հիւ.
Մեծ նոր խան թ. 49

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Ս. ՓԲԿԶԵԱՆ Ա.Ձ.Գ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութիւնս կը փութայ յայտարարել պատուարժան Հայ Հասարակութեան թէ ազգային Սահմանադրութեան Չարգ տարեդարձը Մայիս 24 Կիրակէ օր ըստ սովորութեան շքեղապէս տօնել որոշած է նոյն հաստատութեան զիմացի պարտիզին մէջ:

Այս հանդէսը առիթ մ' է Ազգին համար իւր երախտագիտութիւնն եւ շնորհակալութիւնն յայտնելու առ անմահ յիշատակաց արժանի ազգային բարերարս եւ առ Օսմանեան Գահն եւ Գահակալ Նորին, որոյ շնորհիւ Հայոց ազգը քրտան եւ մէկ տարիէ ՚ի վեր Սահմանադրութեան բարիքները կը վայելէ:

Բայց որպէս զի այս հանդէսն ամենայն կանոնաւորութեամբ եւ շքեղութեամբ կարելի ըլլայ տօնել, Հոգաբարձութիւնս որոշած է քանի մը օրէն ձեռնհաս ազգայիններէ կարգադիր մասնախումբ մը կազմել, նորա տրամադրութեան ներքեւ դնելով ամեն նախապատրաստութիւնք եւ կարգադրութիւնք որ սոյն հանդէսին վայելչութեանն համար անհրաժեշտ են. պատարակոյս լինելով որ մայրաքաղաքիս զանազան թաղերն ալ իւրեանց աջակցութիւնը պիտի օժտարին նրբիւրեւ գործակից լինելով կարգադիր մասնախումբի անդամոց, որոց անունները ինչպէս եւ ալ անօրէնութիւնք

ըստ սովորութեան երկրորդ յայտարարութեամբ պիտի ծանուցուին հասարակութեան.

11 Մայիս 1881
Գրաս. Ազգային Հիւանդանոցի
Մեծ նոր խան թիւ 49

ՀՐԷՏԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹ ՄԸ

Թէքիրտաղէն մայիս 5 թուով հետեւեալ զարմանալի լուրը կ'զբեն տեղւոյս լրագրաց մէկուն:

Ճերեկ քաղաքիս կառավարութեան դուռը մի հազուադիւտ իրողութիւն տեղի ունեցաւ:

Մօրուսաւոր եւ պելսաւոր եւ միանգամայն Տաճիկ կանանց յատուկ քօղով ծածկուած մի Թրքուհի եկէր էր իմանալ թէ էրիկ մարդո՞ւ, թէ կնկան անունով եւ կերպարանքով պէտք է պտտի եւ գործէ այսուհետեւ:

Այս անձը որ Տաճիկ որձեւէզ մ'էր, Մալկարայ գաղային Գիւրքմէն անունով գիւղին մէջ ծնած դեղկուհի մ'էր Ֆաթմա անուն. սա աղջկան մը պէս մեծնալով աղջկան մը պէս ալ կը կարգուի գիւղին երիտասարդներէն միոյն հետ: Մի քանի ամիս անցնելէն յետոյ էրիկը իւր կնոջ վրայ արական նշաններ նշմարելով, առանց մէկուն բան մ' ըսելու գիշերանց կը փախչի գիւղէն. այս հրէշը ինքզինք առանձին գտնելով եւ տեսնելով որ առնական ըզգացումներն աւելի կը զօրանան իր վրայ, արձակ համարձակ Տաճիկ կնկան քօղով գիւղին տներն կը մըտնայ եւ իւր կիրքը գիւղին կանանց վրայ կը յագեցընէ բաւական ատեն. բայց վերջը դիւղացիք իմանալով Մալկարայ կը տանին եւ կը պահանջեն որ արժանաւոր պատիժն տրուի. տեղւոյն կառավարութիւնը չկարենալով որոշում մը տալ՝ հոս կը զրկէ Ֆաթմա դատընը, որուն համար շատ մը բժշկական քըննութիւններ ըլլալէն եւ այրութեան աւելի զօրաւորութիւնը հաստատուելէն վերջ, տեղւոյս միւլթիին հրամանաւ իպրահիմ անունն տրուեցաւ եւ քօղն վար առնուելով 30—35 տարուան Ֆաթման՝ իպրահիմ անուամբ ետ զրկուեցաւ:

Կըսուի թէ սոյն հրէշին, ի տես հասարակութեան պտտցունելու համար, ամսական 10 ոսկի տալ առաջարկեր են, բայց նա ամօթխածութեամբ մը իւր խովն ու արօրը աւելի նախամեծար սեպելով մերժեր է այս առաջարկութիւննին:

Այսպիսի հազուադիւտ դէպքեր թէպէտ պատմութեան մէջ տեղ ունին, բայց հոս աչքով տեսնող չըլլալով, շատերն այլ ընդ այլոյ մեկնութիւններ տալէն դատ, Տաճիկներն ալ նախապաշարմամբ աշխարհի վախճանի նշան մը կ'համարեն:

ԻՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
ԳԻՌԳ. Յ. ԱՅՎԱՋԵԱՆ